600.0207.31.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2017 թվականի №207Ա
քաղ. Երևան

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի №529Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի ապրիլի 3-ի №00027/17-Ս13 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ մասնակցել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ամրակցված հեռախոսակապի ծառայությունների գնման մրցույթին և ճանաչվել է հաղթող՝ առաջարկելով Հանձնաժողովի սահմանած առավելագույն սակագներից ցածր սակագներ,

բ) Հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 16-ի №529Ա որոշմամբ հաստատված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների առավելագույն սակագներից ցածր սակագների կիրառման կարգի (այսուհետ՝ Կարգ) 2.1-րդ կետը, համաձայն որի՝ Ընկերությունն առանց Կարգի 1-ին կետով նախատեսված հաճախորդների (բաժանորդների) նկատմամբ գնային խտրականության բացառման պայմանը պահպանելու, Կարգի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները կատարելու, սակագնային կարգավորման ենթակա ծառայությունները կարող է առաջարկել և մատուցել Հանձնաժողովի սահմանած առավելագույն սակագներից ցածր սակագներով միայն

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պատվիրատուներին,

գ) որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը չի հանդիսանում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պատվիրատու,

դ) որ Հանձնաժողովը 2017 թվականի ապրիլի 12-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի դրույթների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությանը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 12-ի №ԱԲ-866Ս գրությամբ,

ե) Ընկերության 2017 թվականի ապրիլի 20-ի №00040/17-Ս13 գրությունը, որով վերջինս հայտնել է հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ իր պարզաբանումները և անհամաձայնությունը Կարգի դրույթների խախտման վերաբերյալ, մասնավորապես՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պատվիրատուների կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվող մրցույթներին մասնակցելու և գնային առաջարկներ ներկայացնելու առումով Ընկերությունը հայտնվում է անհավասար մրցակցային պայմաններում և զրկվում է մրցույթներին լիարժեք մասնակցելու հնարավորությունից,

զ) 2017 թվականի ապրիլի 21-ին Ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ Հանձնաժողովում կազմակերպված քննարկման արդյունքները, որի ընթացքում Ընկերությունը չի ներկայացրել բավարար փաստարկներ Կարգի դրույթները չխախտելու վերաբերյալ, ինչպես նաև խնդրել է փոփոխություններ կատարել Կարգում, համաձայն որի Ընկերությունն առանց Կարգի 1-ին կետով նախատեսված հաճախորդների (բաժանորդների) նկատմամբ գնային խտրականության բացառման պայմանը պահպանելու, Կարգի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները կատարելու, սակագնային կարգավորման ենթակա ծառայությունները կարող է առաջարկել և մատուցել Հանձնաժողովի սահմանած առավելագույն սակագներից ցածր սակագներով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված բոլոր պատվիրատուներին,

է) որ իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերության կողմից խախտվել են Կարգի 1-ին, 2-րդ, 2.1-րդ և 3-րդ կետերի պահանջները,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Կարգի 1-ին, 2-րդ, 2.1-րդ և 3-րդ կետերի պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն դրամ գումարի չափով:

2. Կարգի 2.1-րդ և 4-րդ կետերում «կետի «ա» և «բ» ենթակետերով» բառերը փոխարինել «կետով» բառով:

3. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

ա. սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու սույն որոշումը.

բ. սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 մայիսի 2017թ.